ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1950 *Общественные науки*

Գուրգեն Նանումյան

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀՆԳԱՄՅԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՌՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստալինյան հնգամյակների տարիներին Սովետական գրականության մեջ տեղի ունեցած հզոր առաջընթացը բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ սովետական ժողովրդի նվաճած աննախընթաց հաղթանակների արդյունքն էր։

1929 թիվը՝ մեծ բեկման տարին պատմության մեջ մտնում է որպես վճռական հաջողությունների տարի՝ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղված պայքարում։ Նա հանդիսացավ աշխատավոր գյուղացիության պատմական շրջադարձի սկիզբը դեպի մասսայական կոլխոզային շարժումը և կուլակության որպես դասակարգի լիկվիդացիան՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա։ «Անցած տարին,— գրում է ընկեր Ստալինը 1929 թվին «Մեծ բեկման տարին» հոդվածում,— մեծ բեկման տարի էր սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում։ Այդ բեկումն ընթանում էր ու շարունակում է ընթանալ քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիզմի վճռական հարձակման նշանաբանով»։[1]

1930 թվականին գումարված պարտիայի 16-րդ համագումարը պատմության մեջ մտնում է որպես «սոցիալիզմի ամբողջ ճակատով ծավալուն հարձակման անցնելու, կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու և համատարած կոլեկտիվացումը կյանքում կիրառելու համագումար»։[2]

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և ԿՎՀ հունվարյան պլենումում 1933 թվականին տված իր զեկուցման մեջ ընկեր Ստալինը ամփոփելով առաջին հնգամյակի արդյունքները, ցույց տվեց ձեռք բերված խոշոր նվաճումները։

Ստալինյան առաջին հնգամյակի ընթացքում երկիրը ագրարային հետամնաց վիճակից վեր է ածվում ինդուստրիալ հզոր երկրի։ Կառուցվում է սոցիալիստական էկոնոմիկայի անսասան հիմքը, ստեղծվում է ժամանակակից տեխնիկայի հզոր բազա՝ արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության համար. կոլտնտեսությունները դառնում են սոցիալիստական տնտեսության հիմնական ձևը։ Սոցիալիզմի հաղթանակը ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ոչնչացնում է գործազրկությունը, աղքատությունը, մարդու շահագործումը մարդու կողմից։ «Առաջին հնգամյակի այդ նվաճումների նշանակությունը, նախ և առաջ այն էր, որ դրանք բանվորներին ու գյուղացիներին վերջնականապես ազատեցին շահագործման լծից և ՍՍՌՄ-ի բոլոր աշխատավորների առաջ ճանապարհ բաց արին իրենց համար ունևոր և կուլտուրական կյանք ապահովելու»։[3]

---

[1] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 133։*
[2] *ՀամԿ(բ)Պ Պատմություն, համառոտ դասընթաց, 1946 թ., էջ 424։*
[3] *ՀամԿ(բ)Պ Պատմություն, համառոտ դասընթաց, 1946 թ., էջ 437։*

Համկ(բ)Պ 16-րդ կոնֆերենցիան կոչ արեց բանվորներին և աշխատավոր գյուղացիներին ավելի մեծ եռանդով ծավալել սոցիալիստական մրցությունը, որը մեր երկրում դառնում էր արդեն մեծ ուժ՝ սոցիալիզմի համար մղվող պայքարում։

Սոցիալիզմը վճռական հեղաշրջում առաջ բերեց ժողովրդական մասսաների գիտակցության մեջ, միլիոնավոր աշխատավորների մեջ ծավալվեց սոցիալիստական մրցությունը, ծնունդ առավ աշխատանքային հզոր վերելք։ «Պատմությանը դեռ ծանոթ չի եղել նոր արդյունարերական շինարարության այդպիսի վիթխարի թափ, նոր շինարարության այդպիսի պաթոս, բանվոր դասակարգի միլիոնանոց մասսաների աշխատանքային այդպիսի հերոսություն։ Այդ բանվոր դասակարգի իսկական աշխատանքային վերելքն էր, որ ծավալվեց սոցիալիստական մրցության հիման վրա»։[1]

Կարճ ժամանակվա ընթացքում սովետական միլիոնավոր մարդկանց աշխատանքը փայլուն արդյունքներ տվեց սոցիալիզմի կառուցման գործում։ Նրանց արտասովոր հերոսությամբ տոգորված գործերի մասին Գորկին գրել է. «Այն, ինչ կատարվում է Սովետների Միությունում, գերազանցում է հեքիաթային բոլոր հերոսների դյուցազունների ֆանտաստիկ սխրագործություններին»։

Ստալինյան առաջին հնգամյակի տարիներին սոցիալիզմի հիմքի կառուցմանը զուգընթաց զարգացման նոր աստիճանի է հասնում սովետական գրականությունը։

Լենինը 1905 թվին գրած «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» նշանավոր հոդվածում սոցիալիստական գրականության մասին ասում էր. «այդ կլինի ազատ գրականություն, որովհետև նա կծառայի ոչ թե հղփացած հերոսուհուն, ոչ թե ձանձրացող ու ճարպակալումից տառապող «վերին տասը հազարին», այլ միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր աշխատավորներին, որոնք կազմում են երկրի ծաղիկը, նրա ուժը, նրա ապագան»։[2]

Մշակելով սոցիալիստական գրականության հիմունքները, Լենինը և Ստալինը ընդգծել են, որ գրականության գոյության և հարաճուն զարգացման հիմքը պարտիականության սկզբունքի հետևողական կիրառումն է։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից հետո բոլշևիկների պարտիան անհաշտ պայքար է մղում գրականության մեջ պարտիականության լենինյան-ստալինյան սկզբունքի կենսագործման, գրականությունը «համապրոլետարական գործի բաղկացուցիչ մասը» դարձնելու համար։ 1920 թվականին Լենինը «Պրոլետկուլտի մասին» բանաձևի նախագծում գրում է, որ «Սովետական Բանվորա-գյուղացիական Ռեսպուբլիկայում լուսավորության գործի ամբողջ դրվածքն ինչպես քաղաքական լուսավորության բնագավառում առհասարակ, այնպես և հատկապես արվեստի բնագավառում պետք է թափանցված լինի պրոլետարիատի դասակարգային պայքարի ոգով, հանուն նրա դիկտատուրայի նպատակների հաջող իրագործման, այսինքն՝ հանուն բուրժուազիայի տապալման, դասակարգերի ոչնչացման, հանուն մարդու ձեռքով մարդու ամեն տեսակի շահագործման վերացման»։[3]

---

1 Համկ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, 1946, էջ 408։
2 Վ. Ի. Լենին, Գրականության մասին, Երևան, 1948 թ., էջ 8-9։
3 Նույն տեղում, էջ 173։

Սոցիալիզմի հաղթանակի շրջանում սովետական գրականության զարգացման համար բացառիկ նշանակություն ունեցավ ընկեր Ստալինի ուսմունքը ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի մասին։

1925 թվականին արևելքի ժողովուրդների համալսարանի քաղաքական խնդիրների մասին իր ճառի մեջ ընկեր Ստալինը ասում է. «Իր բովանդակությամբ սոցիալիստական՝ պրոլետարական կուլտուրան, նայած լեզվի, կենցաղի և այլն տարբերության, արտահայտման զանազան ձևեր ու եղանակներ է ընդունում սոցիալիստական շինարարության ասպարեզ ներքաշված զանազան ժողովուրդների մոտ։ Իր բովանդակությամբ պրոլետարական, ձևով ազգային, այսպես է այն համամարդկային կուլտուրան, դեպի որն ընթանում է սոցիալիզմը։ Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ բովանդակություն է տալիս նրան։ Եվ ընդհակառակը, ազգային կուլտուրան չի վերացնում պրոլետարական կուլտուրան, այլ ձև է տալիս նրան»։[1]

Անցյալի գրականությունից՝ նոր, սոցիալիստական գրականության տարբերիչ գծերը որոշող ստալինյան սահմանումը արտահայտում էր սովետական իշխանության շնորհիվ կազմակերպվող և զարգացող սոցիալիստական ազգությունների դրսևորած նոր հատկանիշների։ 1929 թվականին գրած «Ազգային հարցը և լենինիզմը» նշանավոր աշխատության մեջ ընկեր Ստալինը բնութագրում է սոցիալիստական ազգության նոր հատկանիշները։ Ազատ լինելով արտաքին ճնշումներից, դասակարգային անտագոնիզմից, ազգային սահմանափակվածությունից, սոցիալիստական ազգերը միանգամայն նոր պայմաններում դրսևորում են ազգային կուլտուրայի վերածննդի փոխադարձ շփման համագործակցության, հոգևոր զարգացման, բարոյա-քաղաքական միասնության նոր գծեր։ Ընկեր Ստալինի ուսմունքը սովետական կուլտուրայի մասին, օրգանապես կապվում է սոցիալիստական ազգությունների զարգացման ներքին օրինաչափության հետ։

Պարտիայի 16-րդ համագումարում ընկեր Ստալինն ասում է. «Իրականում պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանը ՍՍՌՄ-ում ազգային կուլտուրաների,— բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային կուլտուրաների ծաղկման ժամանակաշրջանն է, որովհետև իրենք ազգերն էլ սովետական կարգերի ժամանակ ոչ թե սովորական «ժամանակակից» ազգեր են, այլ սոցիալիստական ազգեր. այնպես, ինչպես նրանց ազգային կուլտուրաները ըստ բովանդակության ոչ թե սովորական բուրժուական կուլտուրաներ են, այլ սոցիալիստական կուլտուրաներ»։[2]

Ստալինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ ազգային ռեսպուբլիկաներում զարգանում և ծաղկում են ազգային լեզուները, դպրոցները, մայրենի գրականությունը, թատրոնները և այլն։ Կուլտուրական ռևոլուցիան անհայտությունից, խավարից և հետամնացությունից բարձրացնում է մեծ և փոքր ազգերին, դարձնում նրանց «հավասարը հավասարների մեջ»։ Սովետական սոցիալիստական ազգությունները ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականության և կուլտուրայի ստեղծման հա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 152։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 413—414։

մար քննադատաբար յուրացնում են անցյալի կուլտուրայի դեմոկրատական, ռևոլուցիոն տրադիցիաները։

Սովետական ժողովուրդները պատմական այդ խոշոր հաջողություններ ձեռք բերեցին դասակարգային թշնամու դեմ մղված անհաշտ պայքարով։

Պարտիայի 16-րդ համագումարում ընկեր Ստալինը մերկացնում և ջախջախում է լեզվի, կուլտուրայի, գրականության բնագավառում արտահայտված նացիոնալիզմի և վելիկոռուսական շովինիզմի թշնամական դրույթները։ Ընկեր Ստալինը նշում է, որ այդ թեքման վտանգավոր կողմն այն է, որ նա պատվաստում է բուրժուական նացիոնալիզմը, թուլացնում է ՍՍՌՄ-ի աշխատավոր ժողովուրդների միասնությունը՝ ծառայելով ինտերվենտների շահերին։

Հակադրվելով Լենինի-Ստալինի ազգային քաղաքականությանը, բուրժուական նացիոնալիստները կուլտուրայի, գրականության և իդեոլոգիայի մյուս բնագավառներում դիվերսիոն աշխատանքի միջոցով փորձում էին ֆետիշացնել բուրժուական ազգային կուլտուրան, «միասնական հոսանքի» նշանաբանով ժխտում էին միևնույն ազգության մեջ բուրժուական տիրապետության պայմաններում ազգային երկու կուլտուրաների պայքարը։ Հայ նացիոնալիստները մեր գրականության մեջ փորձում էին զարգացնել «ազգային հատկանիշների խտացման» ռեակցիոն շովինիստական թեզը։ Նրանք միաժամանակ աշխատում էին կտրել հայ սովետական գրականությունը և կուլտուրան ռուս սովետական գրականությունից և կուլտուրայից։

Պարտիայի մղած պայքարը և նրանով պայմանավորված սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում նոր պայմաններ ստեղծեցին սովետական գրողների ստեղծագործական ուժերի համախմբման և նրանց ստեղծագործությունների իդեական միասնության համար։ Սովետական գրողներն ավելի սերտորեն համախմբվեցին պարտիայի շուրջը։ 1932 թվի ապրիլի 23-ին հրապարակվեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումը՝ գրական գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին։ Կենտկոմն իր որոշման մեջ արձանագրեց, որ «ներկայումս, երբ արդեն աճել են պրոլետարական գրականության և արվեստի կադրերը, առաջ են եկել նոր գրողներ ու գեղարվեստագետներ, գործարաններից ու ֆաբրիկաներից, կոլտնտեսություններից գոյություն ունեցող պրոլետարական գրական, գեղարվեստական կազմակերպությունների (ՎՕԱՊՊ, ՌԱՊՊ, ՌԱՄՊ և այլն) շրջանակներն արդեն նեղ են դարձել և արգելակում են գեղարվեստական ստեղծագործության լուրջ թափը»։[1]

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշման մեջ բացահայտվում է պարտիայի հաղթանակը՝ գրականության մեջ հակալենինյան իդեոլոգիայի արտահայտությունների դեմ։

Սովետական գրողները, պարտիայի անմիջական ղեկավարությամբ հետևողական և անհաշտ պայքար մղելով թշնամական գաղափարախոսությունների դեմ, սերտորեն համախմբվեցին բոլշևիկների պարտիայի շուրջը, ստեղծեցին արժեքավոր նորանոր երկեր։

Վերակառուցման և սոցիալիզմի հաղթանակի տարիներին առանձին նշանակություն ստացան Մաքսիմ Գորկու հոդվածները, ելույթները սոցիալիստա-

1 Սովետական գրականության պրոբլեմները, 1948, էջ 374։

կան գրականության սկզբունքների մասին։ Դեռևս ռևոլուցիայից առաջ հիմնադրելով պրոլետարական գրականությունը, Մաքսիմ Գորկին խոշոր դեր է կատարել գրականությունը բանվորական շարժման, սոցիալիզմի հետ կապելու ուղղությամբ։ Քննադատելով բուրժուական ռեալիզմը, Գորկին իր ստեղծագործությունների մեջ և հոդվածներում խորացրեց, զարգացրեց սոցիալիստական գրականության գեղարվեստական մեթոդի լենինյան հիմունքները։ Իր մի շարք հոդվածների մեջ՝ «Գրականության և այլնի մասին», «Բանաստեղծի գրադարանի մասին», «Բանվոր դասակարգը պետք է ստեղծի իր կուլտուրայի վարպետներին» և ուրիշ հոդվածներում, Գորկին ցույց տվեց սովետական գրողի առջև ծառացած խնդիրները, որոնք բխում են նոր մարդկանց դրսևորած վերաբերմունքից դեպի աշխատանքը։ Առաջին հնգամյակի տարիներին Գորկին խոշոր դեր է կատարում գրականության գաղափարական միասնության, սովետական գրողներին պարտիայի շուրջը համախմբելու և իդեապես զինելու գործում։ Գորկու հոդվածների մեջ բացահայտվում են մեր երիտասարդ սոցիալիստական գրականության ձեռք բերած նվաճումները. բազմաթիվ փաստերով նա ցույց է տալիս այն նորը, որը ստեղծվել է մեր գրականության մեջ։ Գորկին սովորեցնում է սկսնակ գրողներին՝ օգտագործել սովետական իրականության մեջ կուտակված սոցիալիստական փորձը, առաջադրում է գեղարվեստական արտացոլման նոր ձևեր, որոնք պետք է օգնեն սկսնակ գրողներին՝ մարքսիստական աշխարհայացքը գրականության մեջ ավելի ամբողջական ձևով կենսագործելու համար։ Գորկին կոնկրետ օգնություն է ցույց տալիս սկսնակ գրողներին սովետական ոճի՝ լեզվի և նոր պատկերների արտահայտման եղանակներ գտնելու գործում։

Ստալինյան հնգամյակի տարիներին Գորկին գլխավորում է «Մեր հաջողություններ» ժուռնալը։ Նրա շուրջը համախմբվում են բազմաթիվ գրողներ. նրանք նկարագրում են գործարաններում, հանքահորերում, սոցիալիստական դաշտերում ծնունդ առնող հերոսներին, հարվածայիններին, որոնք գրականության մեջ են մտնում իրենց աշխատանքային սխրագործությունների կենդանի փորձով։ Գորկին առաջարկում է վեր հանել սովետական պետության ստեղծման և զարգացման ուղին հարթող ռևոլուցիոներների, սոցիալիզմի շինարարների՝ գեղարվեստական կերպարները, որոնք խորապես արտացոլում են նոր կյանքի զարգացումը սոցիալիստական ուղիներով։ Նա կոչ է անում գրել քաղաքացիական կռիվների, գործարանների, քաղաքների, գյուղերի պատմությունը։

Այդ շրջանում առանձին նշանակություն է ստանում գեղարվեստական գրքի և ընթերցող մասսաների կապի խնդիրը։ Կուլտուրական ռևոլուցիան բարձրացնում է աշխատավոր ժողովրդի կուլտուրական մակարդակը. սոցիալիզմի կառուցողը իրեն տեսնում է գեղարվեստական ստեղծագործության մեջ և միաժամանակ արտահայտում է ակտիվ վերաբերմունք այդ նոր ստեղծագործության հանդեպ։

Ստալինյան առաջին հնգամյակը զարգացնում և խորացնում է սոցիալիստական դրականության նոր հատկանիշները։ Ստեղծվում են գեղարվեստական խոշոր կտավներ, որտեղ խոր ընդհանրացումներով դրսևորում են սոցիալիզմի նոր օրինաչափությունները, նրա զարգացման քաղաքական, գաղափարական տենդենցները։ Այդ շրջանում հատկապես աչքի են ընկնում երկրի սոցիալիստական ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտի-

վացումը պատկերող մի շարք երկեր, ինչպես Շոլոխովի «Հերկած խոպանը», Ա. Տվարդովսկու «Երկիր Մոուրավիան», Գլադկովի «Էներգիան», Մ. Շահինյանի «Հիդրոցենտրալը», Լ. Լեոնովի «Սոտ», Պանֆերովի «Բրուսկին» և այլն։ Շոլոխովի «Հերկած խոպան»-ի մեջ երևան է գալիս սոցիալիստական գիտակցությամբ տոգորված նոր անհատը, Դավիդովը. նա արտահայտում է պարտիայի քաղաքական, գաղափարական գիծը կոլխոզային շարժման մեջ։ Պուտիլովյան բանվոր Դավիդովը գյուղում կազմակերպած իր աշխատանքի մեջ դրսևորում է պարտիայի աշխատանքի ոճը, նրա հաղթելու կամքը և պայքարի ռեալ հեռանկարները։ Շոլոխովի վեպի մեջ Ինունդ է առնում նոր հերոսը իր մեծ էներգիայով, մեծ կամքով, գործունեության լայն հեռանկարով, նպատակի հստակությամբ և հաստատակամությամբ։

Սոցիալիստական վերափոխման այդ պրոցեսի հատկանշական գծերից մեկն է դառնում գեղարվեստական ստեղծագործության քաղաքական, գաղափարական միասնության և պարտիականության ձգտումը։ Նույն վեպի մեջ խորը ճշմարտությամբ արտացոլված է պարտիայի վարած գլխավոր գծի խոշոր արդյունքները գյուղում։ Բավական է հիշել վեպի նշանավոր էպիզոդներից մեկը, երբ Դավիդովը մասսայականացնում է ընկեր Ստալինի «Պատասխան կոլտնտեսականներին» նամակը։ Դավիդովի բացատրությունների մեջ հանդես է գալիս նրա պարտիականության զգացումը. դա արտահայտում է իրականության խորը ճանաչման, բոլշևիկյան թեորիան պրակտիկ պայքարի հետ սերտորեն ներդաշնակելու մեծ կարողությունը։

Ստալինյան առաջին հնգամյակն արտացոլող վեպերի մեջ երևան է գալիս սոցիալիստական գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման հետ կապված՝ կադրերի ստեղծման և նրանց դաստիարակման հարցերը. օրինակ, սոցիալիստական արդյունաբերությունը պատկերող երկերի մեջ դրսևորվում է բանվորական, տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման և հին ինժեներական, տեխնիկական ինտելիգենցիայի վերափոխման խնդիրը։ Կատաևի «Ժամանակ առաջ» վեպի մեջ գլխավոր հերոս Մարգուլիեսը ապրում է իր ժամանակի «տեմպով»։ Գլադկովի «Էներգիան» պատկերում է նոր ինժեներա-տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման պրոցեսը։ Նրանք աճում, կազմակերպվում են աշխատանքային նոր կոլեկտիվի մեջ, նոր սոցիալիստական իրադրության պայմաններում։ Սոցիալիստական գյուղատնտեսությունը պատկերող վեպերի մեջ մենք հանդիպում ենք սոցիալիստական սեփականության ոգով համակված նոր մարդկանց, որոնք հիմք են դնում կոլեկտիվ տնտեսություններին և գյուղացիությանը դուրս են բերում սոցիալիստական կյանքի ուղին։ «Մենք ապրում ենք հին կենցաղի արմատական բեկման էպոխան, երբ արթնանում է մարդու արժանապատվության զգացմունքը, սեփական գիտակցումը որպես աշխարհը վերափոխող ուժի»,[1] — ասում է Մաքսիմ Գորկին Սովետական Գրողների Միության առաջին համագումարում տված իր զեկուցման մեջ։ Ստալինյան առաջին հնգամյակի շրջանում գրականության մեջ իր ամբողջական արտահայտությունն է գտնում նոր անհատը, որն իր աշխատանքի պրոցեսում աննկատելի կերպով քանդում է հին աշխարհի հետ ունեցած իր կապերը, տիրապետում է նորին, դառնում է նոր կյանքի շարժիչ ուժը, նրա տնօրենը, դրանով բարձրացնելով իր սեփական գոյության, իր հո-

---

М. Горький, Литературные критические статьи, 1937 г., стр 652.

գլխավոր և նյութական զարգացման պայմանները։ «Ժողովուրդների և պետությունների բախտը հիմա վճռում են ոչ միայն առաջնորդները,— ասում է ընկեր Ստալինը կոլտնտեսականների առաջին համագումարում,— այլ ամենից առաջ և գլխավորապես՝ աշխատավորների միլիոնավոր մասսաները։ Բանվորներն ու գյուղացիները, որոնք առանց աղմուկի և ճարճատյունի կառուցում են գործարաններ ու ֆաբրիկաներ, հանքահորեր ու երկաթուղիներ, կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ, ստեղծում են կյանքի բոլոր բարիքները, կերակրում ու հագցնում են ամբողջ աշխարհին։ Ահա թե ովքեր են նոր կյանքի իսկական հերոսներն ու ստեղծողները»։[1]

Գրականության մեջ արտացոլված հերոսի համար բնորոշը նրա կազմակերպվող սոցիալիստական գիտակցությունն է. սոցիալիստական գիտակցության հիանալի արդյունքը դրսևորվում էր սոցիալիստական մրցության պրակտիկայում։ Աշխատանքի նկատմամբ մարդու ունեցած նոր վերաբերմունքի մեջ ամենից ցայտուն կերպով արտահայտվեց այն խորագույն փոփոխությունները, որ սովետական կարգը մտցրել է մարդկանց գիտակցության մեջ։ Աշխատանքի վերածվելը՝ ծանր, ճնշիչ բեռից՝ պատվի, փառքի և հերոսության գործի, վեհացրեց սովետական մարդուն, աշխատանքը դարձավ ստեղծագործական ոգեշնչման հիմքը։

Շոլոխովի «Հերկած խոպան»-ի մեջ միջակ գյուղացի Կոնդրատ Մայդանիկովը, որը դժվարությամբ է հրաժարվում իր սեփականատիրական սովորություններից, հետագայում սոցիալիստական հասարակության մեջ հանդես է գալիս նոր հատկանիշներով։ Տվարդովսկու պոեմի հերոս Նիկիտա Մարգունովը որոնում է անհայտ երկիր՝ Մոուրավիան, որտեղ նրան թվում էր, թե կարող էր անձեռնմխելիորեն պահպանել իր մանր սեփականատիրական կյանքը, բայց սոցիալիզմի ճշմարտությունն ավելի ուժեղ էր. բոլշևիկների պարտիան օգնեց գյուղացիությանը ըմբռնելու, որ սոցիալիզմի ուղին ամենաիրական և ամենաճշմարիտ ուղին է նրա կյանքի երջանկության համար։

* * *

Սովետահայ գրականության մեջ լայնորեն արտացոլվել է գյուղատնտեսության կոլեկտիվացման պրոցեսը, պրոլետարական ռևոլյուցիայի համար իշխանությունը նվաճելուց հետո ամենադժվարին պատմական խնդիրը,—«միլիոնավոր մանր-սեփականատիրական գյուղացիական տնտեսությունների փոխադրումը կոլխոզների ուղու վրա, սոցիալիզմի ուղու վրա»։[2] Պատմական այդ խոշորագույն իրադարձությունը մեր գրականության մեջ ամենից ցայտուն կերպով նկարագրել է Ն. Զարյանը «Ռուշանի քարափը», «Սաքո Միկինյան» և «Հացավան» գործերում, որոնցից ամեն մեկն արտահայտում է կոլխոզային շարժման տարբեր էտապները գյուղում։

«Ռուշանի քարափը» պոեմում (1930 թ.) հեղինակը նկարագրել է կոլխոզային շարժման սկիզբը «մեծ բեկման տարին», երբ անցումը դեպի համատարած կոլեկտիվացում, տեղի էր ունենում ոչ թե խաղաղ կերպով, այլ գյուղացիների կողմից կուլակության դեմ մասսայական պայքար մղելու կարգով։ «Ռուշանի քարափը» պոեմում նկարագրվող մարդկային փոխհարաբերությունների և բախումների հիմքում ընկած է աշխատավոր գյուղացիության բուռն

[1] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1940, էջ 516։
[2] Համկ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 450։

պայքարը դասակարգային թշնամու, կուլակության դեմ։ Այդ պայքարը սահմանազատում է նորը և հինը, առաջավորը և հետամնացը. այդ պայքարը որոշում է մարդկանց կյանքի ուղին։ Նկարագրելով կոլխոզային շարժման հեղաշրջող նշանակությունը, Ն. Զարյանը գրում է.

«Շարժումն աճեց, վարարեց ու գյուղից գյուղ անցավ
... հազար տարվա կյանքն իր ճանապարհը շեղեց»։

«Ռուշանի քարափ»-ի մեջ ճշտորեն նկարագրվում է կոլեկտիվ տնտեսության ստեղծման և կազմակերպման դժվարությունները։ Կոլխոզի մեջ ընդգրկված դեռևս փոքրաթիվ կոլտնտեսականները գյուղի կոմունիստների՝ Գարսևանի, Ալեքսանի և մյուսների գլխավորությամբ պայքարում են կուլակության դեմ, որոնք ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում կոլխոզի աշխատանքները ձախողելու համար։ Հաղթահարելով դասակարգային թշնամու դավերը, կոլխոզնիկները հերոսական աշխատանքով հաջողությամբ ավարտում են բոլշևիկյան գարնանացանը։

Ն. Զարյանի «Հացավան» վեպը արտացոլում է կոլխոզային շարժման երկրորդ շրջանը, երբ կոլխոզների դեմ ուղղված կուլակների բացահայտ պայքարը անհաջողության էր մատնվել և կուլակները փոխել էին իրենց տակտիկան։ «Կոլխոզները թափանցելով, նրանք գաղտագողի վնաս էին հասցնում կոլխոզներին։ Ամենուրեք նրանք աշխատում էին ներսից քայքայել կոլխոզը, խորտակել կոլխոզային աշխատանքային կարգապահությունը, խճճել բերքի հաշվառումը, աշխատանքի հաշվառումը»։[1] Այսպիսի դրություն էր տիրում նաև «Հացավան» վեպում նկարագրվող Շահումյանի անվան կոլխոզում։ Վատ ղեկավարության հետևանքով թուլացել է աշխատանքային կարգապահությունը և հսկողությունը հանրային գույքի նկատմամբ։ Կոլխոզի մեջ սողոսկած կուլակները վնասարարական գործ էին կատարում, փչացնում էին գյուղատնտեսական գործիքները, կոտորում անասուններին, գյուղացիների մեջ անվստահություն սերմանում կոլխոզի նկատմամբ։ Կոլխոզի նոր նախագահ Լևոն Լամբարյանը իր շուրջն է համախմբում գյուղի լավագույն մարդկանց՝ Վասակին, Ասատուրին, Հասմիկին և ուրիշներին. նա հավատ է ներշնչում մարդկանց, կազմակերպում է կոլտնտեսության աշխատանքը և հասնում բարձր արտադրողականության. մերկացվում են կուլակները և վնասարարները՝ Մացակ Ավագյանը, Մանուկ Վարոսյանը, Եփրեմխանը և մյուսները։ Հին և նոր Հացավանի մեջ տարվող պայքարն ավարտվում է նորի հաղթանակով։ Աճում և ամրանում է կոլտնտեսությունը, նվաճում բարեկեցիկ և կուլտուրական կյանք։ Լևոն Լամբարյանի, Վասակ Զորանյանի, Հասմիկ Զուրաբյանի կերպարների մեջ հեղինակը հաջողությամբ արտահայտել է մեր ժամանակի մարդկանց լավագույն գծերը։ Լևոնի մասին Վասակ Զորանյանն ասում է. «Իհարկե, Լևոնի նման, գուցե նրանից ավելի լավ կոմունիստներ շատ կան աշխարհում։ Բայց ես ամենից ավելի մոտ նրան եմ ճանաչում։ Նրա հետ խոսելիս ես ինքս իմ աչքին բարձրանում եմ և ուզում եմ մեծ, շատ մեծ գործ կատարել։ Լևոնն ինձ ներշնչում է...

Իմ կարծիքով ղեկավարը այդպես պետք է լինի»։ Այսպիսին է կոմունիստ Լևոն Լամբարյանը, նրա ուժը ժողովրդի հետ ունեցած կապի մեջ է, նրա համար չկան ավելի բարձր շահեր, քան ժողովրդի և պետության շահերը։

[1] Համկ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, 1946 թ., էջ 433։

Նույն տարիներին սովետահայ գրականության մեջ արտացոլվել է նաև արդյունաբերության և շինարարության մեջ տարվող պայքարը հանուն սոցիալիզմի հաղթանակի։ Դ. Դեմիրճյանն իր «Ֆոսֆորային շող» և հետագայում «Կապուտան» պիեսներում նկարագրում է սովետական մարդկանց պայքարը արդյունաբերության մեջ քողարկված վնասարարների դեմ, ցույց է տալիս արդյունաբերական ձեռնարկության ու էլեկտրոկայանի շինարարության վերելքը։ Դեմիրճյանի պիեսներում ցույց է տրված մարդկանց հոգեբանական վերափոխումը աշխատանքի պրոցեսում։

30-ական թվականների գրականության նշանակալից երկերից է Ստ. Զորյանի «Սպիտակ քաղաք» վիպակը, ուր գեղարվեստորեն մեկնաբանվում է սովետական ընտանիքի պրոբլեմը։ Վիպակի գլխավոր հերոսը՝ քաղաքային սովետի կոմունալ բաժնի վարիչ Տիգրանը, ամբողջ էությամբ տարված է քաղաքի շինարարության աշխատանքներով։ Նա երազում է կառուցել լայն ու գեղեցիկ փողոցներով և լուսավոր շենքերով մի քաղաք։ «Սպիտակ, սպիտակ տներ, որ հեռվից նայողին թվա ճերմակ մարմարից շինած քաղաք... ամեն տան առաջ ծաղկանոցներ ու ծաղկած ծառեր, հրապարակներ, բուլվարներ ու ծառուղիներ։ Հրապարակներում ու բուլվարներում արձաններ, շատրվաններ... Ասֆալտած փողոցներով սլլում են ավտոներ, ավտոբուսներ... Քաղաքը զրընգում է առավոտյան և երեկոյան աղմուկից»։

Տարված քաղաքի շինարարության պլաններով, Տիգրանը մոռացության է մատնում իր անհատական կյանքը, ընտանիքը, կնոջը. հասարակական կյանքին ձգտող Աննան անուշադրության մատնվելով ամուսնու կողմից լքում է նրան, տարվում ճարտարապետ Սիրյանով. ընտանեկան կոնֆլիկտը լուծվում է ամուսինների հաշտությամբ։ Տիգրանը և Աննան փոխադարձաբար զգում են իրենց հանցանքը։

Զորյանի այս վիպակի հանգեպ գալը պայմանավորված էր մեր երկրում ծավալվող շինարարության հետ։ Վիպակի թերությունն այն է, որ նկարագրվող շինարարությունը հանգեպ է գալիս ոչ թե որպես մարդկանց կյանքը հեղաշրջող պրոցես, այլ միայն որպես ֆոն ընտանեկան կոնֆլիկտը լուծելու համար։

Սոցիալիստական շինարարության մեջ մարդու հոգեբանության վերափոխման թեման են շոշափում նաև Արազու «Ջրվեժի ցոլքում» և «Լուսնի շողերով» վիպակները։ Առաջինի մեջ Արազին նկարագրում է հսկայական մի կոմբինատի շինարարությունը, ձգտելով հատկապես վեր հանել մարդկանց ներքին աշխարհի վերափոխման պրոցեսը։ Վիպակի գլխավոր հերոս ինժեներ Թառյանը տեխնիկական հին ինտելիգենցիայի ներկայացուցիչն է. նրա մեջ դեռևս ամուր նստած են բուրժուական մտայնության շատ տարրեր։ Թառյանն ամեն ինչ դիտում է իր անձնական բարեկեցության, իր «ես»-ի տեսակետից և ցանկանում է, որ շինարարության մեջ ամեն մի գործ կապվի իր անվան հետ։ Ինժեներ Թառյանը դեռևս պատկերացում չունի բանվորական կոլեկտիվի ուժի մասին և բանվորների կողմից՝ շինարարության աշխատանքների թերությունների քննադատությունը նա ընկալում է հիվանդագին կերպով, որպես անձնական վիրավորանք։ Գետաշենի շինարարությունը մամռլում լուսաբանելու համար Մոսկվայից գալիս է Լիդան, որն սկսում է ակտիվորեն մասնակցել շինարարության աշխատանքներին, հանգեպ բերելով իսկական սովետական մարդուն հատուկ աշխատանքային ստեղծագործական նախա-

ձեռնություն։ Լիգան Թառյանին ասում է. «Դուք կառուցում եք շենքեր, բայց կարծես մոռանում եք, որ դրա հետ զուգընթաց պետք է կառուցեք մարդկանց նոր, սոցիալիստական գիտակցությունը»։

Լիգայի ներգործությամբ Թառյանը մերվում է աշխատանքային կոլեկտիվի հետ և հոգեբանորեն վերափոխվելով հասկանում իր պատասխանատվությունը։ Ներկայացնելով սոցիալիստական կյանքի կազմակերպման ու մարդու վերափոխման պրոցեսը, հեղինակը չի խորացել այդ ժամանակաշրջանի զարգացումը դրսևորող հիմնական երևույթի մեջ, սոցիալիստական մրցակցության և հարվածայնության մեջ։ Հեղինակին չի հաջողվել գեղարվեստորեն ցույց տալ այն պատկերը, «թե ինչպես են կիրառում մրցությունն իրենք՝ մասսաները, այն պատկերը, թե ինչպիսի ապրումներ են ունենում բանվորների միլիոնավոր մասսաները, իրականացնելով մրցությունը և ստորագրելով պայմանագրերը, այն պատկերը, որ բանվորական մասսաները մրցության գործը համարում են իրենց սեփական հարազատ գործը։

Մինչդեռ գործի այդ կողմը մեզ համար մրցության վերին աստիճանի կարևոր կողմն է»։[1] Այս մոմենտը Արազու վեպի հիմնական թերություններից մեկն է։

Սոցիալիստական շինարարության թեման դառնում է Սարյանի ստեղծագործության հիմնական թեման 30-ական թվականներին. այդ արտահայտված է նրա «Երկիր խորհրդային», «Երկաթե ոտնաձայներ», «Երկրիս հետ», «Երգեր հարվածայիններին», «Հայրենաշունչ» խորագրով բանաստեղծությունների, բալլադների և պոեմների մեջ։ Սարյանը բարձր վարպետությամբ, գաղափարական հագեցված բովանդակությամբ պատկերում է սոցիալիստական առօրյան, քաղաքի և գյուղի սոցիալիստական վերակառուցումը, սոցիալիզմ կառուցող մարդու հույզերն ու վերապրումները։ Նրա բանաստեղծությունների մեջ հանգես է գալիս նոր կյանքի հերոսը, սոցիալիզմ կառուցող մարդը։ «Երկաթալարի երգը» (1930 թ.) բանաստեղծության մեջ Սարյանը նոր մարդու մասին գրում է.

«Նա հյուսել է աշխարհն այս մեծ,
Գլորել է դարեր, դարեր,
Հիմա կանգնած հաղթողի պես,
Հազար հույսի ջահ է վառել...»։

«Խորհրդային Հայաստան» բանաստեղծության մեջ (1930) նա նկարագրում է վերածնված երկիրը իր ջրանցքներով, գործարաններով, համայնական դաշտերով, էլեկտրոկայաններով, օրավուր աճող շինարարությամբ։ Սարյանի ստեղծագործության հիմնական հերոսը կառուցողն է, հնի դեմ անընդհատ մաքառող և նորը հաստատող պարտիական աշխատողը, կոլտնտեսականը, բանվորը։ Փոխվում է կյանքը, նրա հետ փոխվում է Սարյանի հերոսի վերաբերմունքն իր աշխատանքի հանդեպ, իր շրջապատի հանդեպ։ Սարյանի բանաստեղծությունների մեջ արտահայտված են նոր մարդու հոգեբանության համար բնորոշ սոցիալիստական գիտակցության հատկանիշները։ Սոցիալիստական վերաբերմունքը դառնում է նրա ստեղծագործական մեթոդի՝ ռեալիզմի հիմնական հատկանիշը։

«Նախատինքը» և «Պահակը» պոեմները Սարյանի 30-ական թվականների

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 125։

առաջին տարիների ստեղծագործություններից են, որոնք դրսևորում են նոր մարդու անհատական զգացմունքները, կոլեկտիվի շահերի հետ ներդաշնակելու ձգտումը։ Սարյանը փորձում է ստեղծել հոգեբանական կերպարներ, որոնք ենթարկվում են սոցիալիստական միջավայրի բարերար ազդեցությանը, վերափոխվում են իրենք, վերափոխելով և այդ միջավայրը։

Սոցիալիստական կյանքի հարաճուն զարգացման պատկերն առաջին հնգամյակի ընթացքում ցայտուն գծերով երևան է գալիս նաև երիտասարդ գրական սերնդի ստեղծագործության մեջ։ Այդ շրջանի համար բնորոշ են Աղավնու «Արտերի լիրիկան», Վ. Գրիգորյանի «Անիվի երգը», Թ. Հուրյանի «Հասակ», Ս. Վահունու բանաստեղծությունները, Պայազատի «Բարձրացող հորիզոններ», «Վարդագույն քաղաքի բնակիչները», «Զորաբլուր» պատմվածքները և այլն։

Երիտասարդ բանաստեղծների երկերի մեծ մասը հագեցված են սոցիալիստական կյանքի նոր տպավորություններով։ Միանգամայն թարմ են Աղավնու, Վ. Գրիգորյանի ստեղծագործական պատկերները. պարզ ու անպաճույճ տողերի մեջ բացահայտվում են նրանց ապրումները, որոնք խորապես կապված են նոր կյանքի վերելքի պաթոսի հետ, պայքարի ու հաղթանակի ձգտումների հետ։

Աղավնու առաջին ժողվածուի մեջ բնորոշ են «Հարվածայինների մոտ», «Հասարակ տղան», «Մանածագործներ» բանաստեղծությունները. Աղավնուն հաջողվում է ընդհանուր շտրիխներով ներկայացնել կառուցող մարդուն։ Նորի զգացումը նրա մոտ շաղկապված է սոցիալիստական առաջավոր իդեաների հետ, սոցիալիզմի լիակատար հաղթանակի գաղափարի հետ։ Նույն ձգտումն են դրսևորում Վ. Գրիգորյանի այդ շրջանի աշխատանքային երգերը։ Սոցիալիստական կյանքի կառուցման պրոցեսը պատկերող իր բանաստեղծությունների մեջ Ս. Վահունին տվել է վերակառուցման տարիներին մարդու հոգեբանության մեջ կատարվող բեկումը։

Երիտասարդ բանաստեղծների մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում Թ. Հուրյանի բանաստեղծությունները և պոեմները գրված ստալինյան առաջին հնգամյակի տարիներին։ Նրա «Հասակ» ժողովածուի մեջ մենք գործ ունենք արդեն լայն ընդգրկումներ և մտքի թռիչք ունեցող բանաստեղծի հետ։

Թ. Հուրյանը ցայտուն գծերով արտացոլում է սովետական քաղաքացու սոցիալիստական հայրենասիրության նոր հատկանիշները։ Բանաստեղծի մոտ սոցիալիստական արդյունաբերության զարգացման խնդիրները խորապես կապվում են հայրենիքի պաշտպանության գաղափարի հետ։ «Հողի արյունը», «Դնեպր» պոեմներում և բանաստեղծություններում որոշակի գծերով բացահայտվում է նոր մարդու աշխատանքային հարվածայնությունը, նրա էնտուզիազմը, կառուցման պաթոսը, պայքարը հնի դեմ, նրա հաստատակամությունը, հաղթելու կամքը։

Հուրյանի համար բնորոշ են ինտերնացիոնալ դաստիարակության, ժողովուրդների ստալինյան բարեկամության, սոցիալիստական հայրենիքին նվիրվածության զգացումները, որոնք ավելի խորացան նրա հետագա շրջանի բանաստեղծությունների մեջ։

* * *

Սովետական գրականության վճռական շրջադարձը սոցիալիզմի հաղթանակի շրջանում, նշանավորվում է նրա ստեղծագործական մեթոդի՝ սոցիալիստական ռեալիզմի մեթոդի, ստալինյան սահմանումով։

1932 թվականին ընկեր Ստալինը բնորոշում է սովետական գրողի դերը և տեղը սոցիալիստական հասարակարգում որպես «մարդկային հոգու ճարտարապետ»։ Ընկեր Ստալինի այդ սկզբունքային դրույթը նոր հեռանկարներ և ուղիներ նշեց սովետական գրականության հետագա զարգացման համար։

«Այն, ինչ որ կյանքում ծնվում և օրեցօր աճում է, անհաղթահարելի է, նրա առաջընթաց շարժումը կանգնեցնելն անկարելի է»,[1]— ասում է ընկեր Ստալինը։

Ստալինյան հնգամյակների գրականությունը խոր և բաղմակողմանիորեն արտացոլել է գիտակցության երկու հակադիր հոսանքների՝ աճող և մեռնող, սոցիալիստական և ռեակցիոն, կոլեկտիվիստական և անհատապաշտական գիտակցության պայքարը։

Բայց սոցիալիստական ռեալիզմի գրականության կարևոր արժանիքը նաև այն է, որ նա չի սահմանափակվում մեռնողի և հետամնացի մերկացմամբ, այլ հանգում է սոցիալիստական կարգի հաղթանակի հաստատմանը։ Այդ տարիների գրականության մեջ տեղ գտած լավագույն կերպարները տոգորված են մարդկանց դաստիարակման և նրանց կյանքի վերափոխման ռևոլուցիոն մեծ իդեայով։

Սոցիալիստական ռեալիզմի կենսունակությունը սերտորեն կապվում է մարքսիզմի-լենինիզմի ուսմունքի յուրացման և սովետական կյանքի խոր և բազմակողմանի ճանաչման հետ։

Ընկեր Ժդանովը սովետական գրողների համամիութենական առաջին համագումարում արտասանած իր ճառի մեջ մեկնաբանեց սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի ստալինյան բնորոշման էությունը։ Բնութագրելով 30-ական թվականների առաջին տարիների գրականության ձեռք բերած հաջողությունները, Ա. Ժդանովն ասում է. «Սովետական գրողները ստեղծել են արդեն ոչ քիչ տաղանդավոր երկեր, որոնք ճիշտ և ճշմարտացիորեն են նկարագրում մեր սովետական երկրի կյանքը։ Արդեն մի շարք անուններ կան, որոնցով մենք իրավացիորեն կարող ենք հպարտանալ։ Պարտիայի ղեկավարությամբ, Կենտկոմի հոգատար և ամենօրյա ղեկավարությամբ, ընկեր Ստալինի անխոնջ աջակցությամբ և օգնությամբ սովետական իշխանության և պարտիայի շուրջը համախմբվեց սովետական գրողների ողջ մասսան»։ Ա. Ժդանովն ընդգծում է, որ սովետական գրականության հաջողությունները պայմանավորված են սոցիալիստական շինարարության հաջողություններով, որ սովետական գրողը իր գեղարվեստական երկերի նյութը, թեմատիկան, պատկերները վերցնում է Դնեպրոստրոյի, Մագնիտոստրոյի մարդկանց փորձից, մեր կոլտնտեսությունների փորձից, մեր երկրի բոլոր անկյուններում եռացող ստեղծագործական գործունեությունից։

Ա. Ժդանովը բացահայտում է սովետական գրականության օր ավուր աճող նշանակալից դերը. նա ցույց է տալիս, թե ինչպես սովետական գրակա-

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, 1946 թ., I հ. էջ 336։

նության մեջ արդեն ստեղծվել են նոր տրադիցիաներ, որոնք հնարավորություն են տալիս գեղարվեստորեն բացահայտելու սոցիալիստական կյանքի զարգացման նոր օրինաչափությունները։

Ա. Ժդանովը նշում է, որ մեր երկրում գեղարվեստական ստեղծագործությունների հերոսները նոր կյանքի ակտիվ կառուցողներն են՝ բանվորները, կոլտնտեսականները, պարտիականները, տնտեսվարները, ինժեներները, կոմերիտականները և պիոներները։ Ի տարբերություն բուրժուական արևմուտքի գրականության, որը գտնվում է նեխման և քայքայման պրոցեսում և փառաբանում է պեսիմիզմը որպես արվեստի տեսություն և պրակտիկա, սովետական գրականությունն իր էությամբ օպտիմիստական է, որովհետև նա միակ առաջավոր դասակարգի՝ պրոլետարիատի գրականությանն է ծառայում և սոցիալիստական շինարարության գործին։

Հանգամանորեն մեկնաբանելով սովետական գրողների ստեղծագործական աշխատանքի նշանակությունը սոցիալիստական շինարարության մեջ, Ա. Ժդանովն ասում է. «Ընկեր Ստալինը մեր գրողներին անվանել է մարդկային հոգու ճարտարապետներ։ Ինչ է նշանակում այդ։ Ինչպիսի պարտավորություններ է ձեզ վրա դնում այդ կոչումը»։[1] Ընկեր Ժդանովը բացատրում է, որ լինել մարդկային հոգու ճարտարապետ, այդ առաջին հերթին նշանակում է գիտենալ կյանքը, ճշմարտացիորեն արտացոլել այն, իրականությունը նկարագրել ոչ թե սխոլաստիկորեն, ոչ թե որպես օբեկտիվ ռեալականություն, այլ իրականությունը նկարագրել իր ռևոլուցիոն զարգացման մեջ։ Ըստ որում գեղարվեստական ստեղծագործության ճշմարտացիությունը և պատմական կոնկրետությունը պետք է միահյուսվի աշխատավոր մարդկանց սոցիալիզմի ոգով դաստիարակելու խնդրի հետ։ Գեղարվեստական գրականության և քննադատության այսպիսի մեթոդը սոցիալիստական ռեալիզմի մեթոդն է։

Ընկեր Ժդանովը ցույց է տալիս, որ կյանքի հետ սերտորեն կապված սովետական գրականությանը խորթ է հին տիպի ռոմանտիկան, որը նկարագրում է գոյություն չունեցող կյանք և գոյություն չունեցող հերոսներ, կյանքի հակասություններից և ճնշումից ընթերցողներին տանելով անիրական աշխարհ։ Մատերիալիստական ամուր հիմքերի վրա կանգնած սովետական գրականության համար խորթ չի կարող լինել ռևոլուցիոն ռոմանտիկան, որը որպես բաղկացուցիչ մաս մտնում է սոցիալիստական ռեալիզմի մեթոդի մեջ։

Ա. Ա. Ժդանովն ասում է. «մեր պարտիան միշտ էլ ուժեղ է եղել նրանով, որ նա հույժ գործնականությունն ու պարտիականությունը միացրել է և միացնում է լայն հեռանկարի հետ, դեպի առաջ մշտական ձգտման հետ, կոմունիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարի հետ»։[2]

Սովետական գրողի առաջնահերթ խնդիրն է դառնում բացահայտել գրլխավորը կյանքի մեջ, տեսնել նորը և զարգացողը, որին պատկանում է ապագան։ Բայց ոչ միայն սովետական գրականության ռեալիզմն է ներկայացնում որակապես նոր երևույթ, այլև նրա ռոմանտիկական հատկանիշները։ Սոցիալիստական ռեալիզմի մասին խոսելիս այն սխալ միտքն է հայտնվել, թե ռևոլուցիոն ռոմանտիկան ենթադրում է իրականության իդեալականացում,

[1] Սովետական գրականության պրոբլեմները, 1948 թ., էջ 412։

[2] Նույն տեղում։

հասկանալի է, որ այս տեսակետն ընդհանուր ոչինչ չունի մեր արվեստի սկզբունքների հետ, այն բանի հետ, ինչ Ա. Ա. Ժդանովն է ասում, սոցիալիստական ռեալիզմի և ռոմանտիկայի մասին։ Սովետական գրականությունը տոգորված է ռոմանտիկական հերոսականությամբ ոչ այն պատճառով, որ նա հեռանում է իրականությունից, իդեալականացնում է այն, այլ իրականության մեջ թափանցելու ուժով, ռեալ կյանքի խորը վերարտադրման ուժով։ «Ինչպես էր կոփվում պողպատը» ռոմանտիկական է իր հերոսական էությամբ։ Ռոմանտիկական պաֆոսով են գունավորված «Ռուշանի քարափի» հերոս Ալեքսանը, Սաքս Մ'իկինյանը՝ համանուն պոեմի հերոսը, մարդիկ, որոնց հոգեբանության մեջ սովետական կյանքի պայմաններում ծնունդ է առնում և հաղթանակում սոցիալիստական գիտակցությունը։ Այդ կերպարները մեր ժողովրդի ճշմարիտ զգացմունքների, մեր պարտիայի դաստիարակած մարդկանց կենդանի մարմնացումներն են, տոգորված ռեալիստական ճշմարտության մեծ ուժով։

1934 թվականին հրավիրված Սովետական Գրողների առաջին համագումարը վճռական բեկում առաջ բերեց գրողների ստեղծագործական կյանքում։ Պարտիականության լենինյան-ստալինյան սկզբունքի կենսագործումը և հետևողական պայքարը գրականության իդեական մի՛ասնության համար ապահովեցին սոցիալիստական ռեալիզմի հաղթանակը։

Ստալինյան երկրորդ հնգամյակի տարիները սոցիալիզմի լիակատար հաղթանակի տարիներ էին։ Պարտիայի 18-րդ համագումարում ընկեր Ստալինը նշում է, որ այդ ժամանակաշրջանի կարևոր խնդիրն է «կազմակերպել սոցիալիստական տնտեսությունն ամբողջ երկրում և լիկվիդացիայի ենթարկել կապիտալիստական էլեմենտների վերջին մնացորդները, կազմակերպել կուլտուրական ռևոլուցիա, կազմակերպել լիովին ժամանակակից բանակ երկրի պաշտպանության համար»։[1] Այնուհետև ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ նրա համեմատ երկրում փոխվում են նաև սոցիալիստական պետության ֆունկցիաները։ Ուժեղանում է պետական օրգանների տնտեսական, կազմակերպչական և կուլտուրական դաստիարակչական աշխատանքի ֆունկցիան։

Սովետական պետության առջև դրված նոր խնդիրները խորացնում և նոր բովանդակություն են տալիս սոցիալիստական մարդու անհատական և հասարակական շահերի ներդաշնակությանը։ Միանգամայն հստակ ձևով են գրականորվում սոցիալիստական աշխատանքի մեջ ստեղծված սովետական մարդու բնավորության նոր գծերը։

1935 թվականին Աշխաբադ—Մոսկվա ձիարշավի մասնակիցներին ուղղած իր ողջույնի մեջ ընկեր Ստալինն ասում է. «Միայն նպատակի պարզությունը, նպատակին հասնելու հաստատակամությունը, բնավորության կայունությունը, որոնք խորտակում են բոլոր և ամեն արգելքները, կարող էին ապահովել այդպիսի փառավոր հաղթանակ։ Կոմունիստների պարտիան կարող է շնորհավորել իրեն, քանի որ հենց այդ հատկանիշներն է նա մշակում մեր անծայրածիր հայրենիքի բոլոր ազգությունների աշխատավորության մեջ»։[2]

Կրիմովի «Տանկեր Դերբենդ» վիպակի մեջ գեղարվեստորեն դրսևորվում է մեխանիկ Բասովի ուժեղ կազմակերպված անհատականությունը, որը կոփ-

[1] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1940 թ., էջ 736։

[2] «Պրավդա», 1935 թ., № 251։

վել է աշխատանքային ստեղծագործական պրոցեսում։ Նույն տենդենցն է արտահայտում Կոստանդին Սիմոնովի «Երիտասարդը մեր քաղաքից» պիեսը։ Գլխավոր հերոս Լուկոնինը արտահայտում է սոցիալիստական մարդու կազմակերպված գծերը, որոնք դարձնում են նրան նոր կյանքի տերը, իր սեփական բախտի տնօրինողը։ Նաիրի Զարյանի «Հացավան» վեպի հերոս կոմունիստ Լևոն Լամբարյանը կենսագործելով պարտիայի որոշումները կոլխոզային շինարարության վերաբերյալ, պայքարելով կուլակության և մանր սեփականատիրության ձգտումների դեմ, ճշտորեն կազմակերպելով կոլխոզային արտադրությունը, Հացավանի գյուղացիությանը դուրս է բերում ունևոր և կուլտուրական կյանքի ուղին։

Գրականության մեջ նոր հերոսները հանդես են գալիս հնի և հետամնացի հաղթահարման, կյանքի վերափոխման, բնության բարիքների տիրապետման, սոցիալիզմի լիակատար հաղթանակը նվաճելու բուռն ձգտումներով։ Նոր կեցությունը պայմանավորում է սովետական գրականության հերոսի գիտակցությունը՝ սովետական հասարակակարգի հատկանիշների դրսևորումը և նրա զարգացումը։ Սոցիալիստական ռեալիզմը կերպարի ստեղծման մեջ քանդում է անցյալի հոգեբանական վեպի բոլոր տեսակի կաշկանդումները։ Կերպարը դուրս է գալիս իր անհատական կյանքի նեղ շրջանակներից, իրականության հետ ունեցած հավերժական կոնֆլիկտի վիճակից։ Սովետական գրականության կերպարների մեջ դրսևորվում է անհատականի և հասարակականի միասնությունը, սոցիալիստական գիտակցականության բարձրագույն ձևերը։ Ընկեր Ստալինն ասում է. «անհատի և կոլեկտիվի միջև, առանձին անձնավորության շահերի և կոլեկտիվի շահերի միջև անհաշտելի ներհակություն չկա, չպետք է լինի։ Դա չպետք է լինի, որովհետև կոլեկտիվիզմը սոցիալիզմը չի ժխտում, այլ համատեղում է անհատական շահերը կոլեկտիվի շահերի հետ։ Սոցիալիզմը չի կարող անտեսել անհատական շահերը։ Այդ անձնական շահերին ամենալիակատար բավարարում կարող է տալ միմիայն սոցիալիստական հասարակությունը»։[1]

1930-ական թվականների կեսերից նորի զգացումը դառնում է արդեն պոեզիայի հիմնական գիծը։ Լիրիկական բանաստեղծությունների մեջ հանդես եկած հերոսն իր սուբեկտիվ զգացումների մեջ արտահայտում է պետականորեն, հասարակայնորեն մտածող քաղաքացու գիտակցությունը, բնությունը, սերը, բարեկամությունը և մարդկային այլ փոխհարաբերություններ պայմանավորող բազմազան զգացումները սերտորեն կապվում են սոցիալիստական հասարակակարգի առաջավոր պահանջների հետ։

Սուրկովի, Տվարդովսկու, Տիխոնովի, Սիմոնովի, Լ. Կումաչի, Իսակովսկու և մյուսների բանաստեղծությունների մեջ բնությունը դադարում է պասիվ վիճակի արտահայտությունը լինելուց։ Բանաստեղծությունների մեջ դրսևորված լիրիկական հերոսը բնությունն ընկալում է սոցիալիստական հասարակակարգի կենսական շահերի գիտակցման բարձր արտահայտության մեջ։ Նույն բանաստեղծների մոտ մարդկային փոխհարաբերությունների նկարագրության մեջ հանդես է գալիս սոցիալիստական կյանքի գեղեցկությունը։ Աշխատանքային կոլեկտիվում կազմակերպվող ու հասունացող անհատը ժամանակի ընթացքում արտահայտում է բնավորության նոր հատկանիշներ։

---

1 Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1935 թ., էջ 746։

Այդ հատկանիշները աճում են անցյալից բերած կապիտալիզմի մնացուկների հաղթահարման և նորի ստեղծման ռևոլուցիոն պրոցեսի մեջ։

Գրականության առջև խնդիր է դրվում արտացոլել այն տրամադրությունները և զգացումները, որոնք հատուկ են սոցիալիզմի քաղաքացու հոգեբանությանը և նրա մտածողությանը։ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1932 թվի պատմական որոշումից հետո բոլշևիկների պարտիան խորին ուշադրությամբ հետևում է գրականության և կուլտուրայի զարգացմանը։ Ստալինյան հնգամյակների տարիներին հրապարակված մի շարք կարևորագույն փաստաթղթերը երաժշտության, գրականության և պատմության առանձին հարցերի մասին, մեծապես օգնում են պարտիականության սկզբունքների կենսագործմանը գրականության և արվեստի բնագավառում։ «Պրավդա»-ն 1936 թվականի հունվարի 28-ի «Սումբուր երաժշտության փոխարեն» հոդվածում, գրված՝ Շոստակովիչի երաժշտության մասին, բացահայտում է երաժշտության մեջ բուրժուական ֆորմալիզմի, գռեհիկ նատուրալիզմի մնացուկների արտահայտության փաստը։ Պարտիան ցուցում է տալիս, որ անհրաժեշտ է վճռական պայքար մղել սովետական արվեստի ոգուն միանգամայն խորթ ֆորմալիզմի և նատուրալիզմի արտահայտությունների դեմ։ Մաքսիմ Գորկին նույն թվականին գրած իր «Ֆորմալիզմի մասին» վերնագրով հոդվածում բացահայտում է առանձին ստեղծագործությունների մեջ արտահայտված բուրժուական, դեկադենտական իդեոլոգիայի ազդեցության փաստերը։

Պատմական անցյալի կարևորագույն հարցերի ճիշտ ըմբռնման համար մեծ նշանակություն ունեցավ Ի. Վ. Ստալինի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ա. Ժդանովի դիտողությունները ՍՍՌՄ-ի պատմության դասագրքի կոնսպեկտի վերաբերյալ։ Այդ դիտողությունները բացահայտում են պատմության և կուլտուրայի զարգացման մարքսիստական հանճարեղ դրույթները։

* * *

Ստալինյան Կոնստիտուցիայի ընդունման և նրա իրականացման տարիներին ծաղկում, բարգավաճում են ազգային կուլտուրաները և գրականությունը։

Ստեղծագործական աճման նոր վերելք է ապրում և սովետահայ գրականությունը։ Գրականության գաղափարական միասնության և գեղարվեստական բարձր որակի համար մղվող պայքարը առաջ է քաշում նոր խնդիրներ, որոնք խորացնում են ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականության հատկանիշները. գրականության գլխավոր թեման է դառնում սոցիալիստական գիտակցությամբ տոգորված քաղաքացու հույզերն ու ապրումները, նրա պայքարը՝ հանուն հայրենիքի պահպանման, ամրապնդման ու զարգացման։ Հայրենասիրության, հերոսության, ինտերնացիոնալիզմի, սովետական բարոյականության, ընտանիքի և այլ հարցերը, դառնում են գրականության կենսական հարցերը, և հարստացնում են գրականությունը սոցիալիստական նոր բովանդակությամբ, իրականության արտացոլման գեղարվեստական նոր միջոցներով։

Սովետահայ գրականության զարգացման այդ էտապում աշխուժանում են՝ արձակում պատմական վեպը, պոեզիայում՝ ներբողը, վիպերգը, բալլադը, դրամատիկական պոեմը։

Պատմական անցյալի ուսումնասիրության և նրա դրական կողմերի օգտագործման լենինյան սկզբունքը հիմք է դառնում գրականության մեջ հայրենասիրական հերոսական տրադիցիաների վերհանման համար։ Պատմական թեմատիկան զուգակցվում է ռևոլուցիոն և ժամանակակից թեմաների հետ։ Անցյալի առաջավոր ռևոլուցիոն իդեալները նոր բովանդակություն են ստանում սովետական ժողովրդի համար։ Այդ գաղափարն են արտահայտում Ն. Զարյանի «Դյուցազնագիրք» վիպերգը, Գ. Սարյանի «Պրոխոր Իվանով» պոեմը, Վաղարշյանի «Օղակում», Գուլակյանի «Արշալույսին» դրամաները։ Այդ գործերի մեջ բացահայտվում են սովետական կարգերի համար իրենց կյանքը զոհաբերող ռևոլուցիոներների հերոսական սխրագործությունները։ Գուլակյանի «Արշալույսին» դրաման արտացոլում է հայ աշխատավոր գյուղացիության պայքարը դաշնակցական դաժան տիրապետության դեմ։ Գուլակյանի դրամայի իդեական բովանդակության հիմքում ընկած է հայ ժողովրդի կյանքի տվյալ էտապի ամենակարևոր երևույթը՝ ռուս ժողովրդի օգնությունը հայ ժողովրդին՝ դաշնակցության լծից ազատագրելու գործում։

Անցյալի ռևոլուցիոն տրադիցիաների արտացոլման ցայտուն արտահայտություններից են Արազու «Այրվող հորիզոնը», Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպերը։

Արազին իր վեպում նկարագրում է անցյալ դարի 90-ական թվականներին Պետերբուրգում սովորող հայ ուսանողության ռևոլուցիոն պայքարը։

Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը դրսևորում է ցարական բռնակալության ռեժիմի տակ ճնշվող հայ ժողովրդի ազատագրական ձգտումը։ Նրա հերոսը՝ Սուրենը բացահայտում է ռևոլուցիոն տրամադրություններով համակված հայ ինտելիգենտի հոգեկան ապրումները, նրա մերձեցումը սոցիալիզմի գաղափարին։

Գուլակյանի «Մեծ բարեկամություն» դրամայում գեղարվեստորեն պատկերվում է բոլշևիկների պարտիայի, ընկեր Ստալինի դերը հայ ժողովրդի ազատագրության գործում։

Սովետական պատմական թեմատիկայի համար բնորոշ է դառնում հայրենիքի անկախության համար մղվող պայքարի արտացոլման ձգտումը։

Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պատմական դրաման պատկերում է Հայաստանի պայքարը բյուզանդական նվաճողների դեմ։

Ստալինյան Կոնստիտուցիան բացահայտում է սոցիալիստական իրականության միանգամայն նոր հատկանիշները։ «...արմատապես փոխվեց ՍՍՌՄ ժողովուրդների կերպարանքը, անհետացավ նրանց միջից փոխադարձ անվստահության զգացմունքը, զարգացավ նրանց մեջ փոխադարձ բարեկամության զգացմունքը և այդպիսով կարգավորվեց ժողովուրդների իսկական եղբայրական համագործակցությունը միասնական միութենական պետության սիստեմում»,[1] — ասում է ընկեր Ստալինը ՍՍՌՄ Կոնստիտուցիայի նախագծի մասին արած իր զեկուցման մեջ։

Սոցիալիստական կյանքի զարգացման այդ նոր հատկանիշները նոր ձև և բովանդակություն են տալիս ազգային կուլտուրաների և գրականությունների փոխադարձ շփմանը, ճանաչմանը, գրական կապերի ուժեղացմանը։ Նրանք օգնում են վեր հանելու անցյալի առաջավոր տրադիցիաները, որպես

[1] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1940 թ., էջ 626։

սովետական ժողովրդի կենսական շահերի արտահայտություն, օգնում են բարձրացնելու ազգային կուլտուրաների մեջ այն առանձնահատուկը, որով յուրաքանչյուրը կարող է մտնել համաշխարհային կուլտուրայի գանձարանը։ Դրա փայլուն արտահայտություններից մեկն էր «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյա հոբելյանի նշումը։

30-ական թվականների երկրորդ կեսին ավելի խորացավ ՍՍՌՄ ժողովուրդների կուլտուրաների փոխադարձ ճանաչման և գնահատման ձգտումը։ Գրական, թատերական դեկադաները, գրողների, արվեստագետների հանդիպումները, գրական ու գիտական ստեղծագործությունների համար սահմանված մրցանակաբաշխությունները, հատկապես Ստալինյան մրցանակաբաշխությունը ստեղծեցին բոլոր նախապայմանները սոցիալիստական ազգությունների գրականության նոր վերելքի համար։

Նոր երջանիկ կյանքի խորը գիտակցումը ժողովրդական ստեղծագործության մեջ արտացոլվեց ժողովուրդների ազատությունը մարմնավորող առաջնորդների՝ Լենինի և Ստալինի գեղարվեստական կերպարների մեջ։

Ժողովուրդն ստեղծեց «Լենին հսկա» հերոսական էպոսը, որտեղ պատկերվում է Լենինի և նրա զինակիցների կռիվը ժողովուրդների ազատության համար։ 1938 թվականին լույս տեսավ «Ստալինը հայ աշուղների երգերում» ժողովածուն, որի մեջ բացահայտվում է ժողովրդական երգասացների, գուսանների խորը և անկեղծ զգացումները մեծ Ստալինի հանդեպ։

Սոցիալիստական կյանքն իր արտացոլումն է գտնում Նաիրի Զարյանի ստեղծագործությունների մեջ։ Բանաստեղծի այս շրջանի գործերի հիմնական թեման սոցիալիզմի լիակատար հաղթանակի և սովետական ժողովրդի երջանիկ կյանքի պատկերումն է։

«Վերածնունդ» բանաստեղծության մեջ Ն. Զարյանը ներկայացնում է այն խորը տարբերությունը, որ կա հայ ժողովրդի մռայլ անցյալի և լուսավոր ներկայի միջև։ Բանաստեղծը հայ ժողովրդի պատմության արյունոտ էջերի մեջ տեսնում է նրա աննկուն ոգին, ազատության հասնելու դարավոր իղձը։ Նրա նկարագրած յուրաքանչյուր պատկերը ոգեշնչված է հայրենասիրական խորը պաթոսով։

Ն. Զարյանի թեման չի սահմանափակվում հայ ժողովրդի երջանիկ կյանքի պատկերումով։ Նրա ստեղծագործությունների մեջ բացահայտվում է ստալինյան դարաշրջանի բանաստեղծի հպարտությունը սովետական քաղաքացի լինելու, Սովետական մեծ Միության մեջ ապրելու, Լենինի-Ստալինի մեծ պարտիայի շարքերում նրա կենսատու ուժով սնվելու, աճելու համար։ Այդ ոգով են գրված «Կոլումբներ», «Շքանշանի երդում», «Ֆիրդուսի» և մյուս ստեղծագործությունները։ Ն. Զարյանն իր լայն ընդգրկումներով և խորը ընդհանրացումներով բացահայտում է գաղափարապես հագեցված սովետական պոեզիայի միանգամայն նոր հատկանիշները։

Ն. Զարյանի ստեղծագործության այդ նոր էտապը նշանավորվում է 1935 թվականին գրված «Ստալին» բանաստեղծությամբ։ Գեղարվեստական խոր ընդհանրացումով բանաստեղծը գծագրում է մեծ առաջնորդի մոնումենտալ կերպարը, որը հանդես է գալիս ժողովուրդների դարավոր պայքարի պատմության ֆոնի վրա որպես «ազգերի երջանկության ճարտարապետ ու դարբին»։

«Արեգնային շորրորդության» մեջ բանաստեղծը տեսնում է պոլպատե առաջնորդի փրկարար դերը ժողովուրդների ազատագրման և երջանիկ կյանքի ստեղծման գործում։

Երախտագիտական խորը զգացումով նա դիմում է առաջնորդին, նշելով հատկապես նրա դերը հայ ժողովրդի փրկության գործում։

«Հնչեց բո ձայնը լենինյան, Լենինի հետ միասին։
Դուք օգնության լույս նետեցիք ժողովրդին իմ չոգած,
Դուրս կոչեցիք մահվան վիհից դեպի կյանքի դուռը բաց։
Նա վեր կացավ գոտեպնդված, ոստնեց թափով ահագին
Ու միացավ կոմունիզմի աշխարհաերթ բանակին»։

Ստալինի կերպարը բացահայտվում է Ն. Զարյանի մյուս բանաստեղծությունների մեջ և հատկապես խորանում 1940 թվականին հրատարակած «Դյուցազնագիրք» վիպերգում։ «Դյուցազնագիրքը» իր գաղափարական բովանդակությամբ և գեղարվեստական կատարումով բռնում է իր ուրույն տեղը սովետահայ գրականության մեջ։ Թեման՝ 1918 թվ. ցարիցինյան պաշտպանությունն է։ Պատմական կոնկրետ իրադրության մեջ բանաստեղծը գեղարվեստորեն արտացոլում է ստալինյան ռազմական հանճարի հաղթանակի փայլուն օրինակներից մեկը։ Գեղարվեստական ցայտուն պատկերների մեջ նկարագրելով ստալինյան ստրատեգիական պլանի իրականացման ընթացքը, բանաստեղծը ձգտում է արտացոլել մեծ առաջնորդի հանճարը պատմության ամենադժվարին հանգույցները լուծելու, նրա զարգացումը հստակ հունով տանելու գործում։ Ստալինի գեղարվեստական կերպարի մեջ արտացոլվում է նրա տրամաբանության ամենահաղթ ուժը, պատմական խորաթափանցությունը, սկզբունքայնությունը, հեռանկարայնությունը, խորը հավատը մասսաների ուժի, հաղթանակի նկատմամբ։ Ն. Զարյանը փորձում է գծել առաջնորդի բնավորության մի շարք հատկանիշները՝ հանգստությունը, վճռականությունը, հաղթանակի հավատը, պարզությունը։

Վիպերգի մեջ պատկերված են Ստալինի զինակիցներ Վորոշիլովը, Բուդյոննին։ Տաղանդավոր վրձինով պատկերված է Վորոշիլովի ստրատեգիական նպատակով կազմակերպած նահանջը, Բուդյոննու հարձակումը. պոեմում երևան են գալիս ժողովրդական կերպարներ, որոնք իրենց հերոսական գործունեությամբ և հայացքներով մարմնավորում են առաջնորդի նախագծումները, նրա կազմակերպած պայքարի ոգին։

Ստալինին նվիրված երգերի մեջ արժեքավոր ներդրում է Ավ. Իսահակյանի «Մեծ Ստալինին» բանաստեղծությունը։ Նրա մեջ բանաստեղծը դրսևորում է սովետական ժողովրդի հայրենասիրության, ազգային արժանապատվության խորը զգացումը և հավատը պայծառ ապագայի նկատմամբ։ Սովետական հայրենասիրությունը, որպես առաջատար գաղափար արտացոլվում է սովետահայ մյուս գրողների՝ Ա. Վշտունու, Գ. Սարյանի, Ս. Տարոնցու, Ս. Վահունու, Թ. Հուրյանի, Սարմենի, Աղավնու, Շիրազի բանաստեղծությունների մեջ, Սիրասի, Արաքսի, Հ. Քոչարի, Վ. Անանյանի, Մ. Դավթյանի և մյուսների արձակ ստեղծագործություններում։

Սովետահայ գրականության մեջ հայրենասիրության թեման խորապես շաղկապվում է սոցիալիզմի զարգացման կոնկրետ խնդիրների հետ։

Գ. Սարյանի 1935—40 թվականների ստեղծագործության մեջ խորապես

բացահայտվում է ինտերնացիոնալիզմի, սովետական հումանիզմի զարգացման նոր աստիճանը։ «Այց», «Մրրկահավ», «Երդ Վրաստանից», «Գյուրջի աղջիկ», «Եղբայրության բաժակներ», «Քսանվեց ընկերներ» բանաստեղծությունների մեջ արտացոլվում է բանաստեղծի հիացմունքը ժողովուրդների ստալինյան բարեկամության մեծ գաղափարի իրականացման պատմական նշանակության հանդեպ, ռուս մեծ ժողովրդի հանդեպ։ Նորի զգացումը Սարյանի բանաստեղծությունների հիմնական տարրն է. նրա անձնական զգացմունքները և հույզերը խորապես կապվում են սովետական ժողովրդի կենսական ձգտումների և նրա շահերի հետ. Սարյանի երգը հնչում է որպես հաղթանակի, երջանկության, պայքարի երգ՝ համակված սոցիալիստական երազանքի բնորոշ գծերով։

Ա. Վշտունու երգերի մեջ գծագրված լիրիկական հերոսը դրսևորում է նոր մարդու երջանկությունը («Առատություն»)։ Նրա ներբողների շարքը նվիրված Վրաստանին, Ադրբեջանին, Թուրքմենստանին, Սովետական Մեծ Միությանը, արտացոլում են սովետական հայրենասիրության նոր որակը։ Վշտունու լավագույն ստեղծագործություններից են «Ստալին», «Ստալինի գորգանկարը»։ Վերջինի մեջ բանաստեղծը պատկերել է սովետական արևելքի վերափոխված կյանքը, ժողովրդի խորը սերը առաջնորդի նկատմամբ։

Իրականության ճանաչման հաջող ընդհանրացումներ կան Տարոնցու այդ շրջանում գրված պոեմների և բալլադների մեջ։ «Ստալինի ձեռքը», «Բալլադ Բուդյոննու մասին» ստեղծագործությունների մեջ բանաստեղծը բացահայտում է սոցիալիզմի հաղթանակը որոշող պատմական կոնկրետ իրադրություններ, որոնց մեջ դրսևորում է մեծ առաջնորդի և նրա զինակիցների պատմական դերը ժողովուրդների ռևոլուցիոն պայքարի մեջ։

Սովետահայ գրականության նոր էտապի նվաճումներից մեկն է Սարմենի բանաստեղծությունների և պոեմների «Թռիչք» ժողովածուն։ Սոցիալիզմի լիակատար հաղթանակի փառաբանումը Սարմենի մոտ արտացոլվում է սոցիալիստական ռոմանտիկայի սկզբունքով, սոցիալիստական երազանքը դառնում է նրա ստեղծագործության հիմնական պաթոսը, «Լուսաշող գալիքը» նրա մոտ կենսականորեն շաղկապվում է այժմեականության հետ։ «Լույսերի հովիտ» պոեմը այդ տեսակետից առանձին տեղ է գրավում այդ շրջանի պոեզիայի մեջ իր գաղափարական նպատակասլացությամբ, համարձակ և ճիշտ եզրահանգումներով սոցիալիստական ապագայի մասին։

Սովետահայ գրականության լավագույն նվաճումներից է Ս. Վահունու «Ռազմի երգեր» ժողովածուն։ Սովետական հայրենասիրության և երկրի պաշտպանության թեման Վահունու ստեղծագործության մեջ ստանում է կոնկրետ բովանդակություն, ուղղված ֆաշիստական ագրեսորների պատերազմական նախապատրաստության դեմ։ Բանաստեղծի երգերում հնչում է սովետական փարթամ կյանքով աճած, ամրապնդված հայրենասեր երիտասարդի առնական, խրոխտ ձայնը, նրա պատրաստակամությունը պաշտպանել իր հարազատ երկրի նվաճումները, նրա կյանքը։ Քաղաքական պոեզիայի լավագույն օրինակներից մեկն է նույն ժողովածվում զետեղված «Ազատության արձանին» բանաստեղծությունը, որտեղ Վահունին խորին ատելությամբ մերկացնում է Ամերիկայի բուրժուական դեմոկրատիայի կեղծիքը, քաղաքական սնանկությունը, պատերազմական գավերը։ Պատմական խորը ճշմարտացիու-

թյան հետքերով բանաստեղծը Հայրենական պատերազմից հետո նորից անդրադառնում է նույն թեմային «Սպիտակ տունը» բանաստեղծության մեջ։

Սոցիալիստական կյանքը պատկերող իր բանաստեղծությունների մեջ Սիրազը բացահայտում է ստալինյան երկրորդ հնգամյակի ցայտուն գծերը. «Երգ Հայաստանի» ժողովածուի գործերը դրսևորում են ստալինյան դարաշրջանի մարդու թարմ և խորը զգացումները՝ հայրենիքի մեծության, նրա անպարտելիության, նրա վսեմության մասին։

Սովետական քաղաքացու հատկանշական գծերի բացահայտումը ուշագրավ ձևով է պատկերված Դեմիրճյանի, Սիրասի, Հ. Քոչարի, Քր. Թափալցյանի, Մ. Դավթյանի և մյուս գրողների արձակ գործերի մեջ։

Իր պատմվածքների մեջ Դեմիրճյանը աշխատում է թափանցել ստալինյան հնգամյակների ժամանակաշրջանում առաջադրված խնդիրների մեջ, վեր հանել հիմնականը, բնորոշը, որոնք բացահայտում են կառուցող մարդկանց հոգեբանությունը, նրանց վերաբերմունքը աշխատանքի և կյանքի մյուս երևույթների հանդեպ։ Նրա պատմվածքների և դրամաների մեջ երևան են գալիս ինժեներներ, գիտնականներ, բանվորներ, որոնք տոգորված են կառուցման պրոցեսում հնի դեմ պայքարի, նորի հաստատման իդեալներով. նրանց գործունեության և հայացքների մեջ դրսևորվում է հեղինակի ձգտումը՝ հասկանալ պարտիայի և սովետական կառավարության առաջադրած խնդիրները, ներկայացնել սոցիալիստական շինարարությունը, որպես մարդկային գիտակցության վերակառուցման պրոցեսի հիմք, որպես մեծագույն ստեղծագործություն։

Թեմայի տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում Սիրասի «Անահիտ» վեպը՝ դրված և մշակված ստալինյան հնգամյակների տարիներին։ Հեղինակը շոշափում է սոցիալիստական շինարարության հետ սերտորեն կապված նոր մարդու հոգեբանության վերափոխումը, նրա կոնկրետ վերաբերմունքը սովետական ընտանիքի, բարոյականության նկատմամբ։ Վեպի մեջ կան գեղարվեստական տեսակետից արժեքավոր հատվածներ, որոնց մեջ նկարագրվում է մեր սոցիալիստական կյանքի կառուցման բնորոշ կողմերը. օրինակ՝ «Ուր փոխում են բնությունը» հատվածը, Զանգվի կամուրջի կառուցման նկարագրությունը և այլն։

Հետաքրքիր նորություններ է բերում մեր գրականության մեջ Հ. Քոչարը իր վիպական գործերով և պատմվածքներով։ «Վահան Վարդյան» վիպակից հետո նա հրապարակում է «Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» և «Ամուսնություն» վիպակները։ Հեղինակի հիմնական խնդիրն էր ցույց տալ սոցիալիստական իրականության այն նոր հատկանիշները, որոնց զարգացումը պայմանավորում է սովետական մարդու հոգեբանական նոր գծերի հաստատումը, ի հակադրություն անհատապաշտական հոգեբանության։

Քոչարին ընդհանուր առմամբ հաջողվել է հասնել իր հիմնական նպատակին։ Նորի զգացման դրսևորումը հեղինակին հնարավորություն է տվել դուրս գալ կերպարի հոգեբանական մանրուքների նկարագրման տրադիցիոն ձևերից։ Այդ տեսակետից քննության նյութ է տալիս մեզ «Ամուսնություն» վիպակի գլխավոր հերոսի հոգեբանական անցումների նկարագրությունն իր առավելությունների և թերությունների հետ միասին։

Նոր մարդու վերափոխման հարցն է դրված Քր. Թափալցյանի «Կյանքի

արշալույսին» վեպում։ Գալոն հաղթահարում է ինդիվիդուալիզմը, բնավորության տարերայնությունը, դառնում է կազմակերպված կոլտնտեսական։ Հոդեբանական կերպարի վերափոխման պրոցեսը Թափալցյանին հաջողվել է ներկայացնել ամբողջական ձևով՝ առանձնապես «Կոմերիտներ» պատմվածքի մեջ։ Հեղինակի գործադրած գեղարվեստական մեթոդը սոցիալիստական ռեալիզմը, այստեղ ճշտորեն վերարտադրում է հերոսի և իրականության փոխհարաբերության նոր որակը, նրանց փոխադարձ ներգործման պրոցեսը։

Նորի զգացման ամբողջական արտահայտություններ կան Մ. Դավթյանի «Երջանկություն» նովելների ժողովածուի մեջ։ Հեղինակին հաջողվել է բնորոշ պատկերներով վեր հանել սոցիալիզմի ներթափանցումը կենցաղի մեջ։ Նրա հերոսները խորապես զգում են նոր կյանքի առավելությունները, երջանկությունը դառնում է նրանց համար կեցություն։ Դավթյանի հերոսներն այն ընկալում են որպես սեփական զգացմունք, որպես նոր օրինաչափություն։

Սովետահայ գրականությունը ստալինյան հնգամյակների տարիներին ապրում է ստեղծագործական մեծ վերելք։ Իր գաղափարական բովանդակությամբ բարձրանալով սոցիալիստական ազգության հատկանիշների բացահայտման նոր աստիճանին, սովետահայ գրականությունը ազգային մյուս գրականությունների հետ սոցիալիստական ռեալիզմի ուժով բացահայտում է սովետական գրականության բնորոշ գիծը՝ բոլշևիկյան իգեականությունը, որը խորապես նպաստում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականության բուռն զարգացմանը։

Սովետական գրականության ձեռք բերած նվաճումների կողքին նկատվում են և թերություններ։ Առանձին ստեղծագործությունների մեջ արտահայտվում է սոցիալիստական իրականության ոչ ճիշտ վերարտադրման, բուրժուական օբեկտիվիզմի տարրեր, որոնք բերում են իրենց հետ հին մտածողություն և գեղարվեստական արտահայտման հին ձևերի օգտագործման ձգտում։ Այսպիսի փաստեր մենք հանդիպում ենք Տարոնցու, առանձին դեպքերում Շիրազի, Գրաշու և մյուս պոետների մի շարք բանաստեղծությունների մեջ։

Տարոնցու, Շիրազի, Գրաշու և մյուսների ստեղծագործության մեջ նկատվում է ժողովրդական ոճի օգտագործման ձգտում։ Բայց առանձին դեպքերում այդ դառնում է ինքնանպատակ։ Տարոնցու խոհական բնույթի բանաստեղծությունների և քառյակների մի մասի մեջ արտացոլվում են տրադիցիոն սահմանափակ դատողություններ, իրական կյանքի դիալեկտիկական զարգացման օրինաչափությունների սխալ մեկնաբանություններ, պատմական անցյալի իդեալականացման փաստեր։

Անդրադառնալով ստալինյան առաջին հնգամյակի ընթացքում հրապարակված վեպերի առանձին թերություններին, պետք է նշել, որ մի շարք գործերի մեջ նկատվում են բուրժուական հոգեբանական վեպի սահմանափակ ռեալիզմի առանձին արտահայտություններ։ Ինչպես, օրինակ, Թափալցյանի «Կյանքի արշալույսին», Սիրասի «Անահիտ» վեպերում, Դեմիրճյանի «Ցաված սերը» պատմվածքում դեռևս ամբողջական չեն նորի հաղթանակի և նրա զարգացման պրոցեսի ռեալիստական նկարագրությունները։

Սովետահայ գրականության գաղափարական հասունացման համար վճռական նշանակություն է ստանում ռուս սովետական գրականության ունեցած դերը։

Ուսումնասիրության հետաքրքիր նյութ են պարունակում ռուս սովետական գրականության և սովետահայ գրականության միջև ստեղծված իդեական օրգանական կապերի որակական հատկանիշները, հաղթանակած սոցիալիզմի պայմաններում։

Ռուս սովետական գրականության բացահայտած տրադիցիաների օգտագործման ուղիներով սովետահայ գրականությունը հասնում է գաղափարական և գեղարվեստական նոր որակի։ Կարելի է հիշատակել Արազու, Ստ. Զորյանի, Թ. Հուրյանի, Վահունու, Բորյանի և ուրիշների անունները, որոնք ռուս գրականությունից բերած ստեղծագործական նվաճումներով, խորացնում, հարստացնում են մեր գրականության իդեական բովանդակությունը և գեղարվեստական արտացոլման միջոցները։ Ն. Զարյանի «Ռուշանի քարափը», «Սաքո Միկինյան», «Հացավան», «Դյուցազնագիրք» ստեղծագործությունների մեջ հանդես են գալիս իդեական այդ կապերն արտացոլող գեղարվեստական մի շարք ընդհանրացումներ, որպես մեր սոցիալիստական կյանքի բնորոշ երևույթների, համանման ըմբռնումների արգասիք։

Այսպիսով՝ մեր գրականության մեջ արտացոլվող հիմնական խնդիրները ցույց են տալիս, որ սոցիալիզմի հաղթանակի պայմաններում մեր գրականությունը ձեռք է բերում նոր սոցիալիստական որակ, հասունանում և զարգանում են նրա գաղափարական բովանդակությունը, սոցիալիստական ռեալիզմի արտահայտման ձևերը։ Այդ զարգացումը պայմանավորված է Լենինի—Ստալինի պարտիայի գլխավորությամբ սովետական ժողովուրդների ձեռք բերած հաջողություններով և սոցիալիզմի լիակատար հաղթանակով մեր երկրում։

Рузан Нанумян

О задачах советской армянской литературы в период сталинских пятилеток

Резюме

Построение фундамента социализма в годы первой сталинской пятилетки явилось новой материальной базой для полной победы творческих принципов советской литературы. Создались новые условия для развития литературы, национальной по форме, социалистической по содержанию.

Вместе с национальными литературами СССР развилась и расцвела и советская армянская литература. Сталинский метод художественного отображения социалистической действительности — социалистический реализм вскрыл основную тенденцию нашей литературы—бороться за победу социалистического сознания во всех областях нашей жизни. Для развития этого периода советской армянской литературы имели большое значение поэмы Н. Заряна «Утес Рушана», «Сако Микинян», повести Ст. Зоряна «Белый город», Арази «В блеске водопада», сборник стихотворений Г. Саряна «Железные шаги», и первые произведения молодых поэ-

тов и прозаиков Т. Гуряна, С. Вауни, Агавни, М. Давтяна, Г. Кочара и других, посвященные социалистической перестройке жизни.

Перелом в советской армянской литературе явился результатом последовательного и повседневного руководства партии большевиков и ведущей роли русской советской литературы.

Новые литературные традиции, выработанные М. Горьким, Маяковским, Шолоховым, А. Фадеевым, А. Толстым создали основу для развития советской классики и явились руководящими принципами и для советской армянской литературы.

В годы последующих сталинских пятилеток советская армянская литература пережила небывалый расцвет.

Глубже развилась в литературе тема патриотизма. Отразились новые признаки перехода от социализма к коммунизму—морально-политическое единство и сталинская дружба народов. В поэзии и драматургии и прозе появились темы, отображающие многообразие нашей жизни, ее идейное и практическое развитие. Особый размах получило создание художественных образов великого Ленина и Сталина. Для развития советской армянской литературы имели огромное значение разгром проявлений буржуазного национализма и борьба с вульгарным социологизмом. В литературе была выдвинута задача марксистского использования литературного наследия прошлого и передовых традиций народного творчества.

В довоенные годы расцвели и укрепились в литературе патриотические традиции, совпадающие с интересами советского народа, с интересами социализма.